ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր – տնտեսական մրցակցություն, գործարարության էկոհամակարգ, տնտեսական անվտանգություն, ներառական տնտեսություն:

Անկախացումից ի վեր ՀՀ տնտեսությունը զարգացման մեծ տեմպեր չունեցավ: Այսօր նորից արդիական դարձավ ՀՀ տնտեսության թռիչքաձև, անգամ հեղափոխական զարգացումները: Սակայն, դրան զուգահեռ, անհրաժեշտություն առաջացավ տնտեսության էկոհամակարգի հայեցակարգային դրույթների վերանայումը, որով ոչ միայն ապահովվում է երկրի տնտեսական անվտանգություն, այլև տնտեսական աճի նոր հնարավորությունների շրջանակ: Ընդ որում, այս դեպքում տնտեսավարման էկոհամակարգը հիմնականում կառուցվում է ոչ թե մրցակցային, այլ գործընկերային հիմունքներով: Հոդվածում իրենց մեկնաբանություններն են ստանում ՀՀ տնտեսության էկոհամակարգի բարեփոխման ուղիները:

Տնտեագիտության մեջ բազում փորձեր են կատարվել համադրելու բիոլոգիական և տնտեսական օրգանիզմների կենսաապահովման գործընթացները: Մարդկությունը միշտ էլ փորձել է հասկանալ բնության հրաշագործությունները, բնական օրգանիզմների կատարյալ գործունեության համակարգերը, դասեր քաղել այդ ամենից և դրանք վերարտադրել իր իսկ կողմից կազմակերպվող տնտեսական գործունեությունում: Եվ այդ ձգտումը արդարացված պետք է համարել, քանի որ տնտեսական համակարգը մարդածին միջավայր է, որն իր կատարելությամբ դեռևս բավականին հեռու է բիոլոգիական միջավայրից, և այդ առումով միշտ էլ բարելավումների կարիք ունի:

Հենց այս տրամաբանությամբ, դեռևս 1993 թվականին “Harvard Business Review” գիտական պարբերականում լույս տեսավ Ջեյմս Մուռի «Գիշատիչներն ու զոհերը. մրցակցության նոր էկոլոգիա» հոդվածը, որում զուգահեռներ անցկացվեցին բիոլոգիական էկոհամակարգերի և մարդու կողմից կառավարվող տնտեսական համակարգերի միջև, դրանով իսկ բիոլոգիական էկոհամակարգերի կառավարման սկզբունքներով՝ ուղի-

ներ առաջարկելով կառավարելի դարձնել տնտեսական համակարգերը:[1] Այնուհետև, 1996 թվականին լույս տեսավ հեղինակի «Մահ մրցակցությանը. առաջնորդությունն ու ռազմավարությունը բիզնես էկոհամակարգի շրջանակում» մենագրությունը, որտեղ գործարարությունը մեկնաբանվեց բիզնես էկոհամակարգի շրջանակում գնորդների և արտադրողների փոխլրացնող գործունեությունում, որի կենտրոնում առաջնորդող խոշոր կազմակերպությունն է: Իսկ այսօր արդեն, դրա հետ կապված, տնտեսագիտության մեջ լայն տարածում ստացավ «գործարար էկոհամակարգ» եզրույթը:

Հայտնի է, որ բիոլոգիական էկոհամակարգի գործունեության առանցքային սկզբունքներից են.

- առանձին բիոլոգիական բաղադրիչների գոյատևման պայքարում մրցակցություն սահմանել կենսապահովման միջավայրում նպաստավոր դիրքեր գրավելու համար,
- յուրաքանչյուր բիոլոգիական բաղադրիչով մասնակից դառնալ էկոհամակարգի ներսում գործող սննդապապահովման շղթայում և փոխկապված օղակ հանդիսանալ համակարգում ընդգրկված բիոլոգիական մյուս բաղադրիչների համար,
- հավասարակշռվածություն ապահովել էկոհամակարգի ներսում այնպես, որ այն կայուն զարգացում ունենա ի հաշիվ համակարգում գործող առանձին բաղադրիչների փոխգործունեության հավասարակշռման,
- գոյատևման պայքարում կենսաապահովման մրցակցությամբ ունենալ հետևյալ լուծումների սցենարները. զարգանալ և ընդլայնել բիոլոգիական համակարգի գործունեության շրջանակը, ապահովել կենսապահովման կայունություն, կազմալուծվել և դադարել գործելուց:

Բիոլոգիական համակարգի կենսակերպի վերոնշյալ առանցքային սկզբունքների տեսանկյունից են տնտեսագետները դիտարկում գործարար էկոհամակարգի զարգացման հնարավորությունները, էկոհամակարգեր, որոնք կարող են գործել ինչպես միկրո, այնպես էլ մակրոտնտեսական հարթություններում, լինել մեծ կամ փոքր, ունենալ դոմինանտ դիրքեր բիզնես միջավայրում, կամ ընդամենը սահմանել լոկալ կայուն գործունեություն:

Այսպես, մեգա էկոհամակարգ է հանդիսանում համաշխարհային օվկիանոսը, իսկ լոկալ գործող էկոհամակարգ է լիճը, անգամ ջրափոսում ձևավորված միկրոմիջավայրը: Լճի էկոհամակարգում ձևավորված է սննդապահովման հետևյալ շխթան (տես գծապատկեր 1): Խոշոր գիշատիչ ձկները սնվում են մանր ձկներով, մանր ձկները՝ շերեփուկներով, շերեփուկները՝ ջրիմուռներով, որոնք ապահովում են ջրի մաքրությունը և

[1]**Moore James, F.,** Predators and Prey: A New Ecology of Competition.//Harvard Business Review, 1993

պահպանում են լիճը ճահճացումից: Իսկ վերջինս չափազանց կարևոր է խոշոր ձկների համար, որոնք չեն կարող գոյատևել ճահիճներում: Հետևաբար, լճի կայուն կենսապահովումը մեծապես կախված է նրանում գործող սննդապահովման շխթայից:

Դիտարկենք այն սցենարը, երբ լճի շրջակայքում բնակություն են հաստատում ճայերի երամներ, որոնք սնվում են մանր ձկներով և ինտենսիվորեն սկսում են ոչնչացնել լճի համակարգի մաս կազմող բիոլոգիական այդ բաղադրիչը (տես գծապատկեր 1):



Գծապատկեր 1 Սննդային շխթայով ձևավորվող լճի էկոհամակարգը[1]

Այս դեպքում, ճայերի կենսագործունեությունն իր ուղղակի բացասական ազդեցությունն է թողնում լճի էկոհամակարգի վրա, քանի որ նրանց կողմից մանր ձկների ոչնչացումը հանգեցնում է նաև խոշոր գիշատիչ ձկների սննդային պաշարների սպառմանը և լճում այդ տեսակի ոչնչացմանը: Մյուս կողմից, մանր ձկների սակավության պատճառով արագ տեմպերով շերեփուկներն են զարգանում, որոնք ոչնչացնում են ստրորջրյա բուսականությունը և ջրիմուռների փոխարեն տիղմաստեղծ եղեգներ են աճում և լիճը աստիճանաբար վերածվում է ճահճուտի, այս անգամ արդեն վերափախված էկոհամակարգով (տես գծապատկեր 2):

[1] Կազմվել է հեղինակի կողմից:

Հարկ է նկատել, որ մինչ այդ, լճի էկոհամակարգի առկայությանը զուգահեռ, գործում է նաև «ճայեր-մանր ձկներ» էկոհամակարգը (տես գծապատկեր 1), հիմնված սննդաապահովման մեկ այլ շխթայով, որը չնայած փոխկապակցված համեմատաբար փոքրաթիվ օղակներ ունի, բայց այնուամենայնիվ կարողանում է ազդել առավել մեծ շրջանակով հանդես եկող էկոհամակարգի վրա և կազմաքանդել այն՝ վերածելով ճահճի:

Սակայն միայն դրսի ազդեցությամբ չէ, որ էկոհամակարգը կարող է կազմալուծման գնալ կամ վերափոխվել: Այն տեղի կունենա, երբ խախտվի համակարգի առանձին բաղադրիչների փոխազդեցության հավասարակշռությունը: Այսպես, եթե գիշատիչ խոշոր ձկները մեծ տեմպերով բազմանան, ապա արագորեն կոչնչանան մանր ձկները, որի հետևանքով կբազմանան շերեփուկները, կվերանան ջրիմուռների պաշարները և նորից լիճը կսկսի աստիճանաբար ճահճանալ: Կարող է տեղի ունենալ նաև մեկ այլ սցենար, երբ հակաճահճացման մարդու ներգործության արդյունքում ընդլայնվի լճի ավազանի տարածքը, աճեն մանր ձները և ապահովեն արագ տեմպերով բազմացող խոշոր գիշատիչների սննդային պաշարը: Այս դեպքում արդեն կարձանագրվի էկոհամակարգի շրջանակի ընդլայնում և զարգացում, և ոչ թե ճահճացում:



Գծապատկեր 2 Սննդային շխթայով գործող ճահճի էկոհամակարգը[1]

Հետևաբար, բիոլոգիական էկոհամակարգի կայուն կենսագործունեության համար չափազանց կարևորվում է նրանում փոխկապակցված

[1] Կազմվել է հեղինակի կողմից:

բաղադրիչների միջև կենսաապահովման հավասարակշիռ վիճակի ստեղծումը, որը վերաբերում է նաև տնտեսության գործարար էկոհամակարգին:

Հայաստանի Հանրապետությունում գործարար էկոհամակարգը դիտարկելիս, պատմականորեն այն առաջարկում ենք ներկայացնել երկու փուլով՝ խորհրդային և անկախացման ժամանակաշրջանների համար: Խորհրդային Միության տնտեսական էկոհամակարգը շատ ավելի էնդգրկուն և բազմազան էր: Այնտեղ գործող առանձին հանրապետությունների տնտեսությունները շախկապված էին բազմաթիվ ճյուղերով և փոխադարձ տնտեսական ծառայություններ էին մատուցում: Այնտեղ չէր գործում շուկայական մրցակցությունը, ուստի էկոհամակարգում ընդգրկված տնտեսական առանձին բաղադրիչների միջև հավասարակշռություն էր սահմանվում վարչահրամայական մեթոդներով: Հայաստանը այդ շխթայում ավելի շատ հանդես էր գալիս ինդուստրիալ տնտեությամբ և ձևավորված այդ փակ էկոհամակարգում սպասարկում էր ոչ միայն ներհանրապետական, այլև միութենական տնտեսական շահեր:

Անկախացումից հետո փլուզվեց Խորհրդային Միության տնտեսական էկոհամակարգը և Հայաստանի Հանրապետությունը կանգնեց գործարարության նոր էկոհամակարգի ձևավորման մարտահրավերների առջև: Նախ և առաջ, եթե մինչ այդ, տնտեսական էկոհամակարգի գործունեության հիմնական շարժառիթը միութենական տնտեսական շահերի սպասարկումն էր և հանրապետության տնտեսությունը «խորհրդային հովանոցի ներքո» որոշակիորեն պաշտպանված էր ռիսկային ներազդեցություններից, ապա անկախացումից հետո, ՀՀ-ն արդեն խնդիր ուներ ստեղծելու տնտեսավարման մի նոր՝ վերափոխված էկոհամակարգ, որն առաջին հերթին ապահովելու էր հանրապետության տնտեսական անվտանգությունը, չուներ արտաքին հովանավորչություն և արդեն իսկ գործելու էր շուկայան տնտեսական հարաբերությունների հենքով:

Ներկայիս ՀՀ տնտեսության էկոհամակարգը, մեր կարծիքով, առավելապես խոցելի է հենց տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից: Թերևս, մակրոտնտեսական հավասրակշռության պահպանման հիմնական երաշխիքներից են հանդիսանում արտաքին պետական պարտքի աճն ու դրսից ստացվող տրանսֆերները, իսկ երկրի տնտեսական զարգացման լոկոմոտիվները՝ հանքարդյունաբերությունը և ծառայությունների ոլորտը:[1] Հետևաբար, արդյունահանվող մետաղական հանքաքարի գների կտրուկ անկումները, կամ ծառայությունների ծավալ-

[1] **Անաստասյան Ս.** «Հարկային քաղաքականությունը ՀՀ-ում և դրա արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» Հանրապետական գիտաժողովի նյութեր: Գիրք 1, Երևան 2013թ., էջ 25-29

ների նվազեցումները կարող են լրջագույնս ազդել երկրում ձևավորված գործարարության էկոհամակարգի ներդաշնակ գործունեության խախտման վրա:



____ ՀՀ տնտեսության ներկայիս գործող էկոհամակարգը
----- էկոհամակարգի հնարավոր ընդլայման շրջանակը

Գծապատկեր 3 ՀՀ տնտեսության էկոհամակարգի մրցունակության ընդլայնման ամփոփ նկարագիրը[1]

Հայաստանի Հանրապետությունում դեռ չի հաջողվում գործարարության ոլորտում ակտիվացնելու ինովացիոն առանցքի շուրջ ձևավորվող էկոհամակարգը, և արդյունքում կուտակված մարդկային կապիտալը, գործող բուհերն ու հետազոտական հիմնարկները հիմնականում չեն ներգրավվում տնտեսական զարգացման շխթայում, և դրանով իսկ, չեն հանդիսանում գործարարության էկոհամակարգի բաղադրիչ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսօր, արդեն ինովացիոն տնտեսությամբ երկրներն են մրցակցային դիրքեր գրավում տնտեսության մեգա շուկաներում, հետին պլան թողնելով հումքային ռեսուրսներ արտահանող երկրներին:

Հայաստանի Հանրապետության գործարարության զարգացող էկոհամակարգի մաս կարող է կազմել նաև սփյուռքը: Սփյուռքում բնակվող հայազգի գործարարները չպետք է անմասն մնան ՀՀ տնտեսական զարգացումներից, և իրենց կապիտալով և գործարարության հնարավորութ-

[1] Կազմվել է հեղինակի կողմից:

յուններով բաց թողնեն ՀՀ-ում ձևավորվող բիզնես էկոհամակարգի շխթայի կարևորագույն բաղադրիչ ներկայանալու հնարավորությունը:[1]

Երկրում ձևավորվող գործարարության էկոհամակարգը կարող է գործել կայուն և ունենալ ընդլայնման հնարավորություններ, երբ այն նպատակադրվի հնարավորինս ինքնաբավ տնտեսության զարգացմանը: Այս դեպքում, գործարարության էկոհամակարգը ձևավորվում է հիմնականում արտահանման, և ոչ թե ներմուծման հաշվին, առավելապես կիրառելով ներառական տնտեսության մոտեցումներ:

Այսօր, ՀՀ տնտեսության շարժիչ ուժը օլիգոպոլիկ համակարգն է, որը մեծ հարված է հասցնում ներառական տնտեսավարմանը: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը, սոցիալական բոլոր շերտերը, ձևավորված մարդկային կապիտալը, երկրում կուտակված ֆինանսական ռեսուրսները լիարժեք ներառված չեն տնտեսական առաջընթացի աջակցող գործընթացներում: Հետևաբար, կարծում ենք, որ գործարարության էկոհամակարգում ներառական տնտեսության բաղադրիչը անհրաժեշտ պայման է վերջինիս արդյունավետ գործունեության համար (տես գծապատկեր 3):

Չափազանց արդիական է դառնում այնպիսի ճյուղերի զարգացումը, որոնք մուլտիպլիկացիոն էֆֆեկտ են ստեղծում երկրի տնտեսության էկոհամակարգի զարգացման համար: Այսպես, զբոսաշրջության ծառայությունների ընդլայնումը խնդիր է դնում հյուրանոցային տնտեսության զարգացմանը, ճամփորդական ենթակառուցվածքների (ճանապարհներ, օդանավակայաններ, հյուրատներ և այլն) որակական բաղադրիչների բարելավմանը, ագրոբիզնեսի ակտիվացմանը: Այս պարագայում, արդեն ներճյուղային մրցակցությունը դուրս է գալիս ծառայությունների ոլորտից և զբոսաշրջությունը սպասարկող մյուս ճյուղերում վերափոխվելով՝ գործընկերային օժանդակման միտում է ձեռք բերում: Հենց այսպես էլ տեսության մեջ բնութագրվում է գործարարության էկոհամակարգի գործոնը, որը բիզնես միջավայրը զարգացնում է հիմնականում ոչ թե «շուկայական մրցակցության դաժան կանոններով», այլ գործընկերային համերաշխության և օժանդակության մոտեցումներով: [2]

Нонна Хачатрян, Парадигма развития экономических и биологических экосистем - После приобретения независимости экономика Армении так и не достигла больших результатов. Сегодня стремительный рост, революционное развитие армянской экономики снова стали актуаль-

---

[1] **Ճուղուրյան Ա., Խաչատրյան Ն.,** Ազգային արժեհամակարգ և տնտեսություն, // «Պատմություն և քաղաքագիտություն» գիտական հանդես, 3 (4) 2019, էջ 106-122

[2] **Moore James, F.,** The Death of Competition: leadership and strategy in the age of Business Ecosystems', New York, Harper Business, 1996

ными. Все это требует заново пересмотреть концептуальные положения экономической экосистемы, которая не только обеспечивает экономическую безопасность страны, но и предоставляет новые возможности для экономического роста. В этом случае экосистема экономики в основном строится на основе партнерства, а не на принципах конкуренции. В статье рассматриваются пути реформирования экосистемы экономики Армении.

Nonna Khachatryan, Paradigma of development of economic and biological ecosystem - After gaining independence, the Armenian economy did not achieve much growth. Today, rapid growth, even the revolutionary development of the Armenian economy, has again become relevant. All this requires reconsidering the conceptual position of the economic ecosystem, which not only ensures the country's economic security, but also provides new opportunities for economic growth. In this case, the ecosystem of the economy is mainly built on the basis of partnership, and not on the principles of competition. The article discusses ways to reform the ecosystem of Armenia.